

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊՈՂՈՍՅԱՆ

Ծնվել է 1955թ. մայիսի 1-ին Երևանում:

1962-1972թթ. սովորել է Երևանի թիվ 45 միջնակարգ դպրոցում:

1974 - 1980թթ. սովորել է Լենինգրադի անտառտեխնիկայի ակադեմիայում, ստացել է ինժեներ - մեխանիկի որակավորում:

2001-2004թթ. ընդունվել և ավարտել է Հայաստանի կառավարման ակադեմիան՝ պետական կառավարում և տեղական ինքնակառավարում մասնագիտությամբ, ստացել է պետական ծառայողի որակավորում:

2001թ. մասնակցել է USAID միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված «Բյուջետավորում և ֆինանսական կառավարման քաղաքականություն» զարգացման ծրագրին, 2002թ.՝ UNIFEM միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված «Խաղաղության հաստատումը Հարավային Կովկասում» ծրագրին, 2004թ.՝ USAID և AID միջազգային ծրագրի կողմից կազմակերպված «Բանակցային գործընթացների ղեկավարում» ծրագրին:

1973-1978թթ. Երքաղսովետի ատաղձագործական իրերի գործարանում եղել է կոմերիտմիության քարտուղար, ատաղձագործ:

1987-1988թթ. եղել է Երևանի թիվ 45 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն:

1991-2001թթ. զբաղվել է անհատ ձեռներեցությամբ:

2001թ.-ից «Կարո և Գարիկ» ՍՊԸ-ի հիմնադիր-տնօրենն է:

2006թ.-ից «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ է:

1999, 2002, 2005 թվականներին երեք անգամ անընդմեջ ընտրվել է Էրեբունի համայնքի ավագանու անդամ:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

